որոնք վերաբերում էին զանազան պաշտմունքների եւ ճգութիւնների, եւ ոչ պիտի նկարագրեմ այն անտանելի հագուստը եւ խստակեցութիւնը, որով այդ անապատի միաբանները տանջում ու մաղում էին իրանց անձերը: Միայն այն կասեմ, որ այդ անապատը ամենափոքր ժամանակում այնքան զօրաւոր կազմակերպութիւն ունեցաւ, եւ այնքան հռչակ ստացաւ, որ ամէն կողմից ամենանշանաւոր կրօնաւորներ սկսեցին խմբոել այնտեղ: Նա դարձաւ մի մեծ կենտրոն, մի դպրոց, որի մէջ կրթելով աբեղաները յետոյ այնտեղից դուրս եկան եւ, սփռելով մեր աշխարհի զանազան կողմերը, սկսեցին նոյն կարգերով, նոյն կանոններով նոր անապատներ հիմնել: Ես կը յիշեմ նրանցից մի քանիսի անունները միայն:

Սիւնեաց մեծ անապատի միաբաններից էր մոկացի Պօղոս վարդապետ հրաշարգործը որ իր աշակերտների հետ, որպէս մի նոր առաքեալ, ոտքով շրջում էր զանազան տեղեր, քարոզում էր, յորդորում էր, որ վանքեր, անապատներ, եկեղեցիներ շինեն եւ ամէն տեղ հաստատում էր կրօնական միաբանութիւններ: Դեռ օսմանցիների եւ պարսիկների ձեռքով թափած արիւնը բոլորովին չէր ցամաքել հայոց հողի վրայ, դեռ Շահ-աբասի բանակը գտնւում էր Արցախի (Ղարաբաղի) Քօթուկլու կոչոած տեղում, երբ այդ մոլեռանդը յայտնոեցաւ շահի բանակում, ներկայացաւ թագաւորին եւ, ճակատը գետնին քսելով, խնդրեց, որ իրան թոյլ տայ վանքեր եւ անապատներ կառուցանել: Շահ-աբասը սիրով ընդունեց նրա խնդիրքը եւ հրամայեց իսկոյն, իր ներկայութեամբ, հրովարտակը գրել: Նա գիտէր հայի թոյլ կողմերը. նրա եկեղեցու եւ վանքին մի դիպչիր, իսկ նա պատրաստ կը լինի իր երկիրը, իր անձը եւ ամէն ինչ տալ թշնամու ձեռքը: Թագաւորական հրովարտակով զինոաձ, նա սկսեց թափառել դէպի ամէն կողմ: Գնաց Պարսկաստան, այնտեղ նորոգեց Թաւբիզի եկեղեցին: Այնտեղից անցաւ Գողթնեաց գաւառը, մի հրաշքով բաց արեց Թովմայ առաքեալի վանքի վաղուց փակեալ, անշարժ դռները եւ այնտեղ կրօնական միաբանութիւն հաստատեց: Այստեղից անցաւ Աստապատ, հիմնեց Ս. Ստեփանոս նախավկայի վանքը եւ այլ եկեղեցիներ: Նրա եռանդը եւ սնահաւատ Ժողովրդից ստացած համակրութիւնը այն աստիճան գրգռեցին ժամանակի Մելիքսէթ կաթողիկոսի նախանձը, որ նա բողոքեց թագաւորի Ամիրգունայ անունով կուսակալին, որ նստում էր Երեւան քաղաքում, որպէսզի արգելեն նրան սրբավայրեր հիմնելուց: Երկար տարաձայնութիւններից յետոյ հազիւ թէ կարողացան սանձահարել հրաշագործի մոլեռանդութիւնը:

Սիւնեաց մեծ անապատի միաբաններիցն էր Արիստակէս վարդապետ բարգուշատցին, որ հիմնեց Տանձափարախի անապատը: